# ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ
## ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
## 1958—1959 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով— երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձիք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական թերություններից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար (լուսանկարված դիմումի օրերին):

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմերի հոգևորական առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 25-ը, իսկ ներքին թեմերի թեկնածուները՝ մինչև օգոստոսի 30-ը՝ Հոգևոր Ճեմարան, Հայկական ՍՍՌ Էջմիածին:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի)